

ՊԵՐՍԻԱՆԵՐ

ՆՈՐԱՆՈՒՄ

Յոր գիտա մը:

Վ իննայի շամալարանին առանձնական-
ութեանը մը. եւսով Լէյկերի ասի երկու տարի յա-
ռաջ հանձնարել խորհուրդ մը յաջած էր եւ իւր
բարեկամաց ծանօթացուած Էրզնկաւայ ընդհա-
րակ վերջին ժամանակներս այնչափ յաճախեցան,
որ շատ ծանապարհորդք ասոր զոհ չ'ըլլային եւ ա-
մենեւին ապահովութիւն չ'կար իրենց կենացը: Տը-
Լէյկերի այս չարացած առջեւն առնելու սա առաջար-
կութիւնն ըսաւ. Էրզնկաւայ մեքենային անմիջա-
պէս յառաժ պէտք է երկտարակամութեամբ ապա-
հովութեան կառք մը տանել: Երբեք առաջարկին ը-
լայ նորի իսկ շոգեկառքին մեքենավարն: Էրզնկաւայ
կայարանէն մեկնելու սկսելուն պէս ապահովութեան
կառք ծամբայ կ'ըլլէ որոշեալ հեռաւորութեամբ
մը, զոր կրնայ որոշել շոգեկառաց մեքենավարն միտ
գնելով տեղեւոյ, պարագայից, ուղւոյն շնորհման եւ
այլն: Մեքենավարն կրնայ իրմէ շատ հեռու առջեւ
զապող ապահովութեան կառքն այնպէս գիւրաւ
կառավարել երկտարակամութեամբ, ինչպէս պարզ
ձեռք կառավար մը: Արդ, երբ այս ապահովութեան
կառքն արգելքի մ'ընդհարի, ինչպէս գիտեցն
յառաջ եկող շոգեկառաց ապահովութեան կառ-
քին, կառքին առջեւ կարգեալ դէպ ի դուրս թցու-
ած փղերիկ շնչերէն մին կը խնկարի, եւ մէջի սքն-
եղծին՝ որուն միջնորդութեամբ բուն շոգեկառքէն
երկտարակամութիւն կը հաղորդուէր, դուրս կը
թափի, որով երկու ապահովութեան կառքերն ալ
կը կենան, մեքենավարն ալ ըստ այնմ ինք զինք
կ'ուղղէ:

Տը. Լէյկերի այս առաջարկութիւնն հիմայ
Պրեւի մէջ Տեղակալ Ռուսոյժ ֆոն Գրիշ փոքր
ինչ փոփոխութեամբ սկսած է գործադրել առան-
ձինն արտօնութեամբ Աւստրիական պետութեան:
Գրիշի կատարելագործութիւնն յայնմ է որ ապա-
հովութեան կառքն ընդհարելուն պէս իրեն հե-
տեւող շոգեկառքին մէջ երկտարակամ զանգակներ
կը չնկնէ, որով եւ մեքենավարն կրնայ անմիջապէս
շոգեկառքը կեցնել:

ՏՆՏԵՍԱՎՈՐ

կերամանով մարդոր կնիք յոնիքոն նշանակ:

Ընդհանրի կրթագործները հեռուեալ կեր-
պով կը հանեն իրենց կնիքը: Փորութեմ քարը կամ
կնիքը քրտի մը բացին վրայ հեռուեալ կը տալընեն,
բայց որոշեալ եւ ամեն կողմը հաւասարապէս տա-
նայ՝ ստեպ ստեպ բացին վրայ կը շարեն, մինչեւ
որ այնչափ տալանայ, որ ալ չի կարենան ձեռքով
ռաւուն. իւրքը բարակ խողովակով մը վրան բարակ
կարգ մը ծարպ կը քանէ, եւ վրիթով մըն ալ այս
ծարպին վրայ խրուի (սոճ. շնեկէք) փոշի կը յա-
նն: Կրթամանը բացին վրայ հեռուեալ կը տալընեն
եւ թղթին վրայ կը կանեցնեն. յետոյ թուղթը
քրտի վրայ կը բռնեն, կ'ենթադրուի այնչափ հե-

ռու որ շարի: Կրթամանը կակոշնալէն ետքը՝ բարակ
փայտով մը զորաւոր կը խառնեն, որպէս զի օդոյ
պղպղակներն իւրեն: Կնիքն ու կրթամանն այսպէս պա-
տաստեղէն ետքը՝ կնիքը մէկ երկու գծաշափ հե-
ռաւորութեամբ կրթամանին վրայ կը բռնեն եւ յան-
կարծ վրան կը գնեն: Անմիջապէս ձեռքով կրթին
կոթին վրայ թեթեւ մը կը զարնեն: Կնիք կոթեւ
տանն լաւագոյն է կրթին կոթին վրայ թեթեւ մը
զարնելը, քան երկայն տանն կոթեւը, վրան զի կո-
թեւն տանն կրնայ տեղէն շարժիլ կնիքը: Այս
կերպով հանուած կնիքներն թէ՛ մաքուր եւ թէ՛
աղին կրեւան. մանաւանդ որ խրուի փոշին գե-
ղեցիկ եւ քիչ մ'աղտոտ տեղք կու տայ:

Երկու թարմ պահեղի գործնական նշանակ:

Բարձր չէր (խաղաղ կոտած, սոճ. Գլորի)
բայ օգի մէջ գիւրաւ կը քայրի եւ ասով օգի կամ
գինոյ ոգի հանելու չի գործածուիր, այլ առ առ-
աւեն միայն քայքայ շնչելու եւ կամ աղբի: Արդ,
որպէս զի չէր թարմ մնայ „Allgemeine Wein-
zeitung“ լրագրին համաժամ՝ հարկ է օգին պղծ-
ցութեան պահպանել: Այս նպատակաւ հնանի
մէջն հանելուն պէս պղծք է մեծ տակալի մէջ լե-
ցնել եւ տոփանով մ'ամուր գործել ու հաւասար-
ցնել: Այսպէս լցնելէն ետեւ վրան թանձր կարգ
մը որթանիկ տերեւ շարելու է, որուն վրայ 15
սանդիկներ թանձրութեամբ կաւ տալանելու է,
վրան ալ ափ մը տալ: Ստեպ ստեպ վրան լուր
սրկելով՝ պէտք է նայիլ որ աւագը միշտ խնամ
մնայ, որպէս զի տակի կաւը չի չորնայ, չ'երգի ու
շաւարեն: Տակաւը խնամ տեղ պահելու է կամ
լաւ եւս՝ հորի մէջ թաղելու է: Այս կերպով շնե-
կուայն տանն թարմ կը մնայ:

ՄԱՆՐԱՆԻՔ

Պարիզի Արտանտանտիկոն աշտարակ:

Փարիզի 1889ին շամալարահան Արտան-
տանտանտիկոն համար յայտնի է որ 300 մեք բարձ-
րութեամբ աշտարակ մը կը շինուի ամբողջ արտեա-
տահանգէն երկտարակամ լաւով լաւաւորելու
համար: Այս աշտարակին վրայ ելլելու համար չորս
վերամարմ մեքենայ շինուած է, որոնք աշտարակին
մինչեւ գրեթէ է կենն երկաթի ուղւոյ վրայէն վեր
կը ձգուին, վրան զի աշտարակին վրայ մասն շնչ
երես ունի, իսկ անկէ վե՛ր՝ օդոյ մէջ կանխալ: Այս
մեքենաներէն մին միայն ունի երկու ընդարձակ սե-
նեակ, իսկ չորսն իւրաքանչիւրն 50 հոգի կրնայ առ-
նուլ, որով շարն ի միասին մէկ անգամէն 400 հոգի
վեր կը հանն կամ կ'ընցնեն: Եթէ մեքենային
փոկն, որով վեր կը հանուին սենեակներն, փրթին,
անմիջապէս սենեակներն կը կենան՝ մանաւանդ ին-
քուագործ մեքենայի մը ձեռք. ասով ամեն փոտնդի
առջեւն բռնուած է: Աշտարակն՝ որ ամբողջ երկա-
թէ է, չորս ստից վրայ կեցած է, որունցմ երկուսն
7 մեք, եւ միւս երկուսն 14 մեք խորունկ թա-
ղուած եւ հաստատուած են երկրի մէջ: